№ 167 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5 1903 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5 № 167

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 258.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 258.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գոնէ փաստեր և իրողութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Փոքրիկ նկատողութիւններ. Նամակ Շուշուց. Նամակ Սօչիից. Նամակ Անդրկասպեան երկրից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ճանապարհից.

ԳՈՆԷ ՓԱՍՏԵՐ ԵՒ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Լրագրական գործունէութեան մէջ մենք յաճախ ականատես ենք լինում հետեւեալ հանգամանքին: Լրագիրը հաղորդում է մի շարք տեղեկութիւններ միայն այն նպատակով, որպէս զի ընթերցողը գաղափար ունենայ նրանց մասին, իսկ միւսների վերաբերութեամբ նա յայտնում է իր կարծիքը, որոշ դիրք է բռնում: Այդպէս՝ մենք տեղեկութիւններ ենք տուել յաճախ քաղաքական դէպքերի, ոճիրների և պաշտօնական հաղորդագրութիւնների մասին առանց մի բառ մեզնից աւելացնելու: Այդ դէպքում կարեւոր է նկատել այն կէտը, որ ընթերցողին հաղորդված լինեն կարեւոր նիւթեր և տեղեկութիւններ: Մենք օրինակ երկար ժամանակ տեղեկութիւններ էինք տալիս սերբիական դէպքերի մասին, պահպանելով մեզ համար միայն արձանագրողի դեր: Շատ անգամ մենք հաղորդում էինք տեղեկութիւններ Հռոմի պապի հեռաւոր և մերձաւոր Արեւելքի, Վիլհելմ կայսրի ճառերի, պաշտօնական բանակցութիւնների և ուրիշ առարկաների մասին, արձանագրելով միայն եղելութիւնները և առանց յայտնելու մեր կարծիքները այդ եղելութիւնների առիթով:

Լրագրի կողմից կարծիք յայտնելը և դիրք բռնելը ամէն մի երեւոյթի առիթով անիրագործելի է զանազան պատճառներով: Եւ եթէ լրագիրները զետեղէին տեղեկութիւններ միայն այն բաների մասին, որոնց առիթով նրանք հնարաւորութիւն ունեն խորհրդածութիւններ անել, այն ժամանակ շատ խոշոր և նշանաւոր երեւոյթներ թէ քաղաքական և թէ հասարակական կեանքում պէտք է մնային լրագրական էջերից դուրս: Լրագիրը շտապում է տալ տեղեկութիւններ ընթացիկ կեանքի, նշմարվող հոսանքների, ժամանակագրական արտայայտութիւնների մասին, վերապահելով իրան յայտնել կարծիք, երբ նա յարմարութիւն կունենայ կամ ընթերցողներին թողնելով եղած նիւթերը կշռելու և քննելու:

Ընթերցողները, որոնք երկար ժամանակ հետեւել են հասարակական կեանքի խնդիրներին և սովոր են կարծիքների և մտքերի փոխանակութեան գնահատում են իրողութիւնների արժէքը, ցանկանալով, որ նրանց ձեռքը տրված լինի կարելին չափ շատ նիւթ:

Մի ուրիշ անգամ կը խօսենք այս խնդրի մասին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Վաճառականները, ինչպէս յայտնի է, ընդհանուր համաձայնութեամբ որոշեցին խանութները բանալ առաւօտեան ժամը 8-ին մինչև երեկոյեան 8-ը. բացառութիւն կազմողները շատ քիչ են և երևի նրանք ևս կը միանան այս համաձայնութեան:

Այժմ գործակատար դասակարգի մէջ այս փոփոխութիւնը ահագին յեղափոխութիւն է առաջ բերելու և բնականաբար ծնվում է այն հարցը, թէ արդեօք ինչպէս պէտք է անցկացնեն գործակատարները 2—4 երեկոյեան ազատ ժամերը, որոնք առաջ անց էին կացնում խանութներում և գուցէ մի փոքր արդարանայ պեսիմիստների այն կարծիքը, թէ այժմ նրանք պէտք է զանազան գինետներում կամ անբարոյական տեղերում անցկացնեն, քանի որ այդ դասակարգը համարեա չունի մի տեղ՝ որ կարողանայ հաւաքվել, զբաղվել, ուրախանալ և նպատակայարմար կերպով ժամանակ անցկացնել: Միակ տեղը, ուր կարող են նրանք լինել, դա գործակատարների փոխադարձ օգնութեան ընթերցարանն է, բայց նա էլ բաց է միայն ընկերութեան անդամների համար և մասամբ Թիֆլիսի ժողովարանը՝ ուր կարող են այցելել համեմատաբար բարձր դիրք և խոշոր պաշտօն ունեցողները: Եւ որպէս զի պարզ լինի գործակատարների համար ժողովարանի վարչութեան բռնած ընթացքը դէպի այս աշխատող դասակարգը՝ զանց չենք առնի արձանագրել մի դէպք, որ տեղի ունեցաւ մօտ օրերում:

Մասնաւոր խանութում ծառայող և իրան աշխատանքով ապրող մի օրիորդ կամենում է լինել ժողովարանի ընտանեկան երեկոյին և մի փոքր հանգստանալ առօրեայ չարքաշ աշխատանքից, ուստի դիմում է իր ծանօթներից մէկին իրան ուղեկից լինել, որը և կատարում է: Ժողովարանում օրապահ աւագը, նկատելով այդ նորեկ հիւրին՝ սկսում է եռանդուն կերպով նրա մասին տեղեկութիւն հաւաքել և գտնվում են երիտասարդներ, որոնք ինչ ինչ հաշիւներից դրդված չարախօսում են օրիորդի մասին և իբրև ապացոյց նկատում, որ ծառայող է և այն էլ «կօնդիտերիայում», ուստի պէտք է որ անբարոյական լինի: Եւ ահա ժողովարանի աւագը, առանց խղճի խայթոցի, լոկ ենթադրութեան հիման վրա, խնդրում է երեսի քրտինքով իր ապրուստը ճարող օրիորդին հեռանալ ժողովարանից, երևի այն պատճառով, որ բարոյականութիւնը տիրապետէ ժողովարանում և նա չընկնի իր վեհութիւնից:

Ահա այսպիսի դէպքերը և մանաւանդ այն համոզմունքը, որ փոքրիկ պաշտօն ունեցող գործակատարները չեն կարող երբէք մուտք գործել Թիֆլիսի ժողովարանը, մեզ հասցնում է այն եզրակացութեան, որ անպայման գործակատարների համար հարկաւոր է առանձին սեփական ժողովարան, ուր իւրաքանչիւր գործակատար, կին թէ տղամարդ, յանուն իր կոչման կարողանայ ազատ կերպով լինել անդամ, ուր նրանք կարողանան զբաղվել ընթերցանութիւնով, անմեղ զուարճութիւններով, ուր կարելի լինի նրանց համար կազմակերպել ներկայացումներ, համերգներ, դասախօսութիւններ, գրական երեկոներ և այլն, ուր նրանք կարողանային միմեանց հետ շփվել:

Վերջացնելով մեր տեսիլքը, խորհուրդ ենք տալիս այն «խաղէրիններին», որոնց համար թանգ է գործակատարի բարոյականը, աջակցեն իրականացնել այս միտքը, իսկ գործակատարներին՝ եռանդուն կերպով շարունակել վերջացնել սկսածը:

Անյուշ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Յուլիսի 31-ին

Յուլիսի 29-ին, նախաձեռնութեամբ օր. Քնարիկի, կայացաւ Ն. Խանդամիրեանի դահլիճում մանկական տօն: Յայտարարութիւնների մէջ տպված էր, որ պիտի ներկայացնէին «Սեւ տեղ սպիտակ» վօդեվիլը և դնեն կենդանի պատկերներ: Սկիզբը ժամը 5-ից էր և վերջացաւ մօտաւորապէս 11-ին:

«Սեւ տեղ սպիտակ»-ի փոխարէն, չը գիտեմ ինչու, խաղացին «Մէչօի թուղթը», որը, ի հարկէ, չը գոհացրեց մանուկ դասակարգին, հէնց նրա համար, որ այդ վօդեվիլը մի առանձին հետաքրքրութիւն չէր կարող շարժել մանուկների մէջ:

Բաւական աջող էին կենդանի պատկերները, որոնք երեխաների կեանքից էին:

Մեր խոնարհ կարծիքով, մանկական երեկոյթներ կազմակերպելու ժամանակ պէտք է դնել այնպիսի պիէսներ կամ վօդեվիլներ, որոնց բովանդակութիւնը որ և է կապ ունի երեխաների կեանքի հետ: Այդպիսի դէպքերում նոյն իսկ նպատակայարմար է յանձնել դերերը երեխաներին, ինչպէս այդ արին Բագու «Ժողովրդական զուարճութեան ընկերութեան» անդամները: Բացի դրանից, օր. Քնարիկը մոռացել էր մտցնել ծրագրի մէջ նաև երաժշտական մաս, մասնակցութեամբ դարձեալ փոքրիկների: Փոքրիկների մասնակցութիւնը նրա համար է անհրաժեշտ, որ, որքան փորձերը ցոյց են տուել, ոգեւորութիւնը ընդհանուր է լինում և երեխաների մէջ զարգանում է բարոյական նախանձ:

Չէ կարելի մատնանիշ չանել և այն բանի վրա, որ աւելի շատ զուարճանում էին մեծերը, քան փոքրերը, շնորհիւ նրան, որ երեկոյթի կառավարիչները այդ գործին միանգամայն անծանօթ անձնաւորութիւններ էին: Երեխաներին զուարճացնելը, զբաղեցնելը շատ լաւ բան է, բայց դրա համար հարկաւոր է մի առանձին ընդունակութիւն ունենալ. թէ չէ, խօ չէ կարելի լէզգինկայով ու վալսով միայն երեխաներ զբաղեցնել:

Այդ երեկոյ երեխաների մէջ ոգեւորութիւն չէր նկատվում: Անկարգութիւնները կատարեալ էին: Չը կար մի կարգին կարգադրիչ, որը ասէր մեծերին, որպէս զի նրանք դուրս գնային պարերի ժամանակ դահլիճից և այդպիսով ասպարէզը թողնէին փոքրերին: Ընդհակառակը՝ խառնվում էին մեծերը և փոքրիկները միատեղ և այդպէս պարում: Ասենք այդ երեկոյ աւելի շատ մեծեր կային, քան փոքրիկներ: Մեր շուշեցին դեռ շատ հեռու է երեխաներին այդպիսի տեղերում զուարճացնելու մտքից և գուցէ այդ էր պատճառը, որ այդ երեկոյ հաւաքվել էին համարեա բոլորը բուրժուա դասակարգի երեխաներ, որոնք այսպէս թէ այնպէս զբաղվում ու զուարճանում են իրանց տներում: Հասարակ ու միջակ դասակարգի երեխաներ քիչ կային: Այդ մասամբ պէտք է վերագրել մուտքի վճարի թանգութեան: Փոքրիկների մուտքի վճարը 30 կոպէկ էր, իսկ ծնողների կամ մեծերի—50 կ.:

Շուշեցին ընդհանրապէս թմրած է. հարկաւոր է նրան աշխոյժացնել, ոգեւորել, մանաւանդ երեխաներին: Այդպիսի թոյլ ծրագրով ու ոյժերով չի կարելի շուշեցուն գրաւել դէպի այդպիսի տեղերը: Ամառանոց եկող ինտելլիգենցիան պարտաւոր է այդ անել: Վաղը կամ միւս օրը ահա առաջ կը գայ ձմեռը և մեր Շուշին, «մեկնելով իր պատմական տուները», երկար կը քնէ, որպէս զի երբեմն զարթնէ և խրվի բամբասանքների ճահճի մէջ ու նորից քնէ ձմեռային ու անմեղ քնով:

Բայց մինչև երբ...

Կովկասեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀԻՑ

IV

ԳԻՒՂԵՐՈՒՄ

(Շարունակութիւն)

Եւ սակայն, հայ գիւղերից մի քանիսը ինչ պատմական անցեալ ունեն:

Ահա Բաշ-Շօրագեալը, առաջին մեծ հայ գիւղը Ալէքսանդրօպօլից մօտ 15 վերստ հեռաւորութեան վրա: Նա գտնվում է Կարսախանի ջուր անունով գետակի վրա, որ թափվում է Արփաչայի մէջ: Անցնելով այդ մերկ ու սև գիւղի միջով, ով կարող է ենթադրել, թէ դա հին Շիրակաւանն է, որ աւելի հին ժամանակներում Երազգաւորս էր կոչվում: Միայն այս տեղերին ծանօթ կառապանն է, որ ուշադրութիւնդ դարձնում է գիւղից դէպի վեր, բարձր թումբին գլուխը պսակող հին շինութեան վրա: Դա Սմբատ թագաւորի շինել տուած եկեղեցին է: Շիրակաւանը Բագրատունիների արքունիքն էր: Այստեղ էր ապրում Սմբատ առաջինը, քանի որ թագաժառանգ էր: Այստեղ էին վճռվում Աշոտ առաջինի հիմնած բաւական լայնածաւալ պետութեան գործերը: Այստեղ էին զօրաժողովներ լինում՝ դէպի այս ու այն կողմը արշաւելու համար, իսկ արշաւանքների բազմաթիւ առիթներ կային, Սմբատը ամբողջ կեանքը պատերազմների մէջ անցկացրեց:

Բացի մի հատ կիսակործան եկեղեցուց ուրիշ մի յիշատակ չէ մնացել այս դժբախտ թագաւորից, մինչդեռ նրա տխուր կեանքը և մանաւանդ դժբախտ վախճանը պատմական ամենասարսափելի դրամաներից մէկն է կազմում և արժէր, որ աւելի աչքի ընկնող յուշարձաններով դրօշմվէր ապագայ սերունդի սրտերի մէջ:

Թագաւորեց նա 24 տարի: Իր հայր Աշոտից ստացած լինելով մի նորակազմ, խելքով և ուժով նուաճած պետութիւն, նա հանդիսացաւ պարտաճանաչ ժառանգ: Ոչ միայն, չը վատնեց հայրենի ժառանգութիւնը, այլ և աշխատեց ընդարձակել նրան: Կռուեց, շարունակ յաղթեց, բարձրացրեց նոր թագաւորութեան պատիւն ու փառքը, նոյն իսկ թագ տուեց վրաց Ատրներսեհին: Նրա հայր Աշոտը թագաւորեց այն պայմանով, որ հարկ տայ Բաղդադի խալիֆին և ճանաչէ Ատրպատականի նրա փոխանորդի գերիշխանութիւնը: Սմբատը մէջ տեղից հեռացրեց այդ փոխանորդին և անմիջապէս արաբական արքունիքի հետ գործ ունէր: Բագրատունիների գահը մասնաւոր, տեղական նշանակութիւն ունէր: Սմբատը սկսեց ընդարձակել նրա իրաւասութիւնը, ձգտում էր համազգային գահ դարձնել: Քանի կողմերից թշնամութիւն և դիմադրութիւն բարձրացաւ այդ անվեհեր ու քաջ թագաւորի դէմ: Սմբատը չընկճվեց, նա կռւում էր, միշտ կռւում: Եւ Ատրպատականի արաբ կուսակալները ձեռնունայն յետ էին դառնում, երբ ընտանի դաւաճանութիւնը սև օձի պէս մտաւ աջողակ թագաւորի ծոցը: Հարազատ քրոջ որդին միացաւ թշնամու հետ՝ թագաւորական թագ ստանալու փառամոլ տենչանքով: Եւ Վասպուրականի հայ զօրքերը մահմեդականների դրօշակների տակ կռւում էին շիրակեցիների դէմ: Արիւն շատ ու շատ թափվեց, երկիրը կործանվեց: Մենակ մնացած Սմբատը շատ դէս ու դէն ընկաւ, բայց վերջը հարկադրված եղաւ իր սուրը յանձնել Իւսուֆ ոստիկանին:

Անտանելի սոսկալի էր գերի թագաւորի դրութիւնը: Նրան տկլորացնում էին, ծաղրում հրապարակի մէջ: Նրա կոկորդի մէջ թաշկինակ էին կոխում, նրա մարմինը պատառ-պատառ էին անում: Ինչպէս պատերազմի մէջ անվեհեր էր Սմբատը, այնպէս էլ այդ զարհուրելի տանջանքների մէջ ցոյց տուեց նահատակվող քրիստոնեայի անվախութիւնը: Կատաղած ոստիկանը բարբարոսութեան նոր հնարներ էր գտնում, մինչև որ հրամայեց կտրել դժբախտի գլուխը: Բայց դրանից յետոյ էլ նա չը կշտացաւ: Դիակը կախ տուեց Դուինի հրապարակում, ամէն կերպ անպատուած էր նրան...

Եւ այսպէս մեռնողը մի թագաւոր էր... Բաշ-Շօրագեալի աղքատ փողոցներից անցնողը տեսնում է հին, աւերակ եկեղեցին. այնտեղ նահատակ թագաւորի անունը յիշատակող գիր էլ չը կայ: Այդպէս է եղել իւրաքանչիւր լաւ հայի ճակատագիրը: Ոչ գերեզման, ոչ անուն: Միայն պատմութիւնն է իր փոշոտված, մոռացութեան մատնված էջերի միջից մրմնջում այդ եկեղեցին տեսնողին, թէ ինչպէս մի ժամանակ մարդիկ գիտէին մեռնել իրանց հայրենի հողի համար...

Տխուր է Բաշ-Շօրագեալի քարէ տեսքը: Բայց աւելի տխրալի է այն յիշատակը, որ թողել է այժմեան աղքատ գիւղը մի ժամանակ իր արքունիքը դարձրած թագաւորը...

Ուղևորը Բաշ-Շօրագեալից շարունակելով

ՆԱՄԱԿ ՍՕՉԻԻՑ

—

Յուլիսի 29-ին

Սօչին, Ադլէրը և Բուապաշէն իրանց շրջակայ հայաբնակ գիւղերով վերջապէս ազատվեցին Քութայիս—Թիֆլիսի հոգևոր իշխանութեան քմահաճոյքներից և ենթարկվեցին Աստրախանի թեմին։ Ժողովուրդը, մանաւանդ նրա հասկացող մասը, առանձին ուրախութեամբ ընդունեց այդ փոփոխութիւնը, յոյս ունենալով, որ այլ ևս զանազան բաղդախնդիր քահանաներից կազատվի և հոգևոր գործերի մէջ կը տիրէ ցանկալի կանոնաւորութիւն։

Իբրև հոգածութեան առաջին քայլ՝ նոր իշխանութիւնը ուղարկեց քննիչ—այցելու Ղզլարի յաջորդ Թովմա վարդապետին, որը քիչ ժամանակի մէջ կարողացաւ մետրոհամար կազմել, երէցփոխներ ընտրել մատուռների համար զանցառու և ապիկար քահանաներին կարգի հրաւիրել և հեռացնել յայտնի Խաչատուր քահանայ Յարութիւնեանին, որը վերջին անգամ Քիշինեվ և ուրիշ տեղեր թափառելուց յետոյ, այժմ ցանկանում էր փաթաթվել սօչեցիների վզին։ Տարիների ընթացքում գործերը այնքան անկարգ են ընթացել, որ շատ ժամանակի և մի քանի այցելութիւնների կարօտ են մի քիչ կանոնաւորութիւն մտցնելը նրանց մէջ։ Դժբաղդաբար, Թովմա վարդապետը շատ էր շտապում յետ դառնալու և և բացի կրօնական հարցերից, չը կարողացաւ ուսումնարական, յարաբերական անյետաձգելի գործերը կարգադրեց և մանաւորապէս հաշտութիւն կայացնել մեր ամենից կենսունակ գիւղացիների—լօռեցիների երկպառակված մասերի մէջ, որոնք շնորհիւ նախկին ուսուցչի գործունէութեան, ահա երկրորդ տարին է շարունակում են թշնամաբար վերաբերվել, չը նայելով որ երկու կողմի նիւթական ու բարոյական շահերը պահանջում են անմիջական հաշտութիւն։

Թովմա վարդապետի այցելութիւնը անօգուտ չանցաւ և յոյս ունենք, որ կազմած տեղեկագիրները առաջնորդ սրբազան հօր կողմից ուշադրութեան առնվելով, կունենան իրանց համեմատական բարերար ազդեցութիւնը գաղթականական շրջանում և գոնէ կազատվենք զանազան Տէր-Սիմոնների և Խաչատուրների նման քահանաներից, որոնց ռուսական նաւերը պարբերաբար ներածում են մեր անտէր շրջանները։

Արլօ

ՆԱՄԱԿ ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԵՐԿՐԻՑ

—

Սերախս, Յուլիսի 28-ին

Սերախս աւանը, որ գտնվում է Թէջէն կայարանից 10 ժամվայ հեռաւորութեան վրա, ռուսաց տիրապետութեան տակ է 1865 թուականից ի վեր, Թէջէն գետը (որը այս տարվայ ապրիլ ամսի 20-ին դուրս գալով ափերից, միլիօնների վնասներ հասցրեց ինչպէս երկաթուղու վարչութեան, նոյնպէս և առևտրականներին), որ իր սկիզբն է առնում աւգանական և պարսկական լեռներից, հոսում է Սերախս աւանից $2^1/_2$ վերստ հեռաւորութեամբ արևմտեան կողմով, հարաւից հիւսիս ուղղութեամբ, որը և բաժանում է ռուսաց և պարսից սահմանները։ Պարսից սահմանում հնուց գոյութիւն ունի համանուն «պարսկական Սերախս» զինուորական բերդը, որը տարբերվում է «հին Սերախս» անունով։ Այդտեղ—հին Սերախսում կայ մի գունդ զօրք (եթէ կարելի է զօրք անուանել) իր մի երկու ժանգոտված թնդանօթներով և նախաջրհեղեղեան հրացաններով։

Նոր Սերախսը, որ ռուսաց Սերախսն է, ունի տեղական թիւրքմէն տարրի սալար ցեղի 3000 տուն բնակիչներ. բացի այդ, 1894 թուականից Սերախսի շրջակայքում գաղթականութիւն են հաստատված 40 տուն գերմանացի գիւղացիներ, որոնք գաղթած են Ռուսաստանից։ Թիւրքմէնները պարապում են երկրագործութեամբ (ցորեն, գարի, կտաւատ և բամբակ) և խաշնարածութեամբ. իսկ գերմանացի կօլօնիստները պարապում են նոյնպէս երկրագործութեամբ և կառապանութեամբ։ Երկրագործութեան մէջ թուրքմէնները իրանց նախաջրհեղեղեան գործիքներով ներկայացնում են գերմանացի կօլօնիստների հակապատկերը. վերջիններս վարելու և հնձելու գործիքներ բերել են տալիս Բերդեանսկից։

Անցեալ տարի թէև Անդրկասպեան երկրում և Թուրքեստանում կատարելապէս անբերրիութիւն էր, բայց Սերախսում բերքը միջակից ստոր լինելով հանդերձ, այնու ամենայնիւ ժողովուրդը կարողացաւ ինքն իրան պահպանվել։ Իսկ այս տարի ժողովուրդը շատ գոհ է առատ բերքի պատճառով, թէև երկրի մի քանի կողմերում մորախը փչացրել է բերքը, թողնելով Սերախս, Թէջէն և Մերվը ազատ աւերումից։

Խօսելով տեղական բուն բնակիչների մասին, աւելորդ չէ մի քանի խօսք ասել և եկւոր թափառական հայերի մասին, որոնք պարապում են գլխաւորապէս առևտրով։ Հայերի թիւը, բացի զինւորներից, որոնց թիւը մօտաւորապէս 40 է, հասնում է մօտաւորապէս 65 հոգու, որոնց մէջ կան 12 ընտանիքաւորներ։ Այդ հայերը կատարելապէս զուրկ են հոգևոր մխիթարութիւնից, չը նայելով, որ 15 ժամվայ հեռաւորութեան վրա են գտնվում Մերվ և Ասխաբադը, որտեղ քահանաները գիտեն միմիայն առատ խաչահամբոյրներ հաւաքել։ Այն ժամանակ, երբ Սերախսի հայերին այցելում էր տխրահռչակ հանգուցեալ Գրիգոր քահանայ Յովսէփեանը, Սերախսի հայերը տարէնը երկու անգամ (Ծննդեան և Յարութեան տօներին) երբեմն պահանջված դէպքում էլ աւելի հոգևոր մխիթարութիւն էին գտնում։ Բայց այժմ, երբ Ասխաբադի և Մերվի ճեմարանաւարտ և ներսէսեան դպրոցաւարտ քահանաների (որոնք սովոր են ամեն մի պսակադրութիւնից և մկրտութիւնից տասնեակ րուբլիներ, երբեմն և 50 րուբլի խաչահամբոյր վերցնել) հովւութեան տակ են, տարիներով այդ հայերը մնում են առանց հոգևոր մխիթարութեան և՛ առանց հաղորդութեան. որոնց երեխաները նոյն իսկ մնում են առանց մկրտութեան տարիներով. այժմ այստեղ կան երկու երեխաներ, որոնք ահա տարին լրանում է և դեռ չեն մկրտված հայ քահանայի բացակայութեան պատճառով։

Ս. Յ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կիրակի, օգոստոսի 3-ին, Կովկասեան կառավարչապետ իշխան Գօլիցին իր ամուսնու հետ միասին Թիֆլիսից ուղևորվեց դէպի Բելիյ-Կլիւչ։

—

Մեզ հաղորդում են, որ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեան, այսօր, օգոստոսի 5-ին Պետրովսկից ճանապարհ կընկնի դէպի Էջմիածին։

—

Օգոստոսի 1-ին Թիֆլիսի արհեստաւորների վարչութեան մէջ տեղի ունեցաւ դերձակների ժողովը։ Այդ օրը շոր կարող կանայք և տղամարդիկ պէտք է ընտրէին ուստաբաշի և զանազան պաշտօնատար անձանց։ Ժողովին ներկայ էին բազմաթիւ կանայք, որոնք ցանկացան ընտրութիւններին մասնակցել։ Ժողովի սկզբին դերձակ տղամարդիկ յայտնեցին, թէ կանայք իրաւունք չունեն ընտրութիւններին մասնակցել, և այդ պատճառով կանայք չը պէտք է ներկայ լինեն ընտրութիւններին։ Արհեստաւորների աւագ Բաֆոյէլեանց բացատրեց ժողովին, որ արհեստաւորական կանոնադրութեան մէջ ոչ մի տեղ ասված չէ, թէ կանայք իրաւունք չունեն ընտրութիւններին մասնակցել։ Դրանից յետոյ սկսվեց քուէարկութիւնը։ Կանայք ուստաբաշի թեկնածու անուանեցին մի կնոջ, բայց արհեստաւորների աւագը թոյլ չը տուեց դրա քուէատուփը դնել, ասելով թէ ինքն չը գիտէ, թէ ժողովը իրաւունք ունի կին ընտրել և այդ պատճառով բացատրութեան համար կը դիմէ նահանգապետին։ Վերջը համքարի ուստաբաշի ընտրվեց Մէլքնչուկ, իսկ օգնականներ Տարասով և Արութինով։

—

Երգիչ Ամիրջան, որ ներկայումս գտնվում է Նիժնի-Նովգորոդում, տեղական լրագիրների ասելով մեծ աջողութեամբ երգում է օպերայում։ Թէ «Пиковая Дама» և թէ «Демонъ» օպերաներում նա ապաւորութիւն է գործել իր բարձր և ընդարձակ ձայնով։

—

Մօտ օրերումս Թիֆլիսի ձիաքարշի անօնիմ ընկերութեան դիրեկտորը յանձնեց Թիֆլիսի քաղաքային վարչութեանը 150,000 րուբլի այն 600,000 րուբլու հաշւից, որ ընկերութիւնը պէտք է տար քաղաքին, որպէս կանխավճար փողոցները կատարելագործված եղանակով քարելու համար։

—

Թիֆլիսի այգեգործական ուսումնարանի վերատեսուչ Իվանով թողնում է իր պաշտօնը և տեղափոխվում է Քութայիս՝ րէալական ուսումնարանի ուսուցչի պաշտօնով։

—

«Ծնոբիս-Փուրցելի» լրագիրը հաղորդում է, որ առաջիկայ 1903—1904 ուսումնական տարվանից գուրիական-մինգրէլական վիճակի եկեղեցական-ծխական ուսումնարաններում բոլոր առարկաները պէտք է աւանդվեն բացառապէս ռուսերէն լեզուով։

—

Կիրակի, օգոստոսի 3-ին, Հաւլաբարի ժողովրդական թատրոնում հայ թատերասէրների խումբը տուեց իր 30-րդ ներկայացումը։ Խաղացվեց «Կոյր»—դրամա հինգ գործողութեամբ, ֆրանսերէնից թարգմանութիւն։ Չը նայած որ պիէսը մեծ էր և դժուար, սակայն սիրողները բաւական աջող կերպով տարան խաղը։ Աչքի էր ընկնում պ. Սարեան (Տարսի բժշկի դերում), որի խաղը մտածված էր, միայն երբեմն ընկնում էր չափազանցութեան մէջ։ Լաւ կատարեց պ. Խարազեան Ալբերտ Մօրիէլի (կոյր) պատասխանատու դերը։ Միւս դերակատարներն էլ գոհացուցիչ էին։ Սակայն, ցանկալի է, որ պիէսը աւելի համապատասխան և մատչելի լինի հասարակ ժողովրդին։ Դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր խուռն բազմութեամբ. նկատվում էր կարգապահութեան թուլութիւն։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Վեհափառ Կաթողիկոսը մի քանի օրով գնաց Օշական գիւղը։ Խիստ շոգերը ստիպեցին ծերունի Հայրապետին մի քանի օր Օշականի օդում անցկացնել»։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Երկարատև անձրևներից յետոյ Ախալցխայում այժմ սկսվել են անտանելի շոգերը։ Մի կողմից ամառային տօթը և միւս կողմից քաղաքի փողոցները անտանելի անմաքրութիւնների հոտերը շատ դժուար դրութիւն են առաջացրել մեզանում։ Այս տարի մեր քաղաք են եկել, բաւական թւով օտարաբնակ ախալցխացիներ ամառն անցկացնելու։ Նրանց մեծ մասը գնացել է շրջակայ ամառանոցները և գիւղերը հանգստութեան կեանք վարելու։ Այս ժամանակներում սովորաբար քաղաքումս ոչ մի զուարճալի հանդէսներ կամ տեատրոններ տեղի չեն ունենում կարծես ամառային շոգերի ազդեցութիւնից նիրհում է մեր քաղաքի կեանքը։ Նորեկ հիւրերը շատ տխուր և ձանձրալի են անցնում իրանց օրերը»։

—

ՂԱՄԱՐԼՈՒԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 29-ին տեղի ունեցաւ հետևեալ մարդասպանութիւնը։ Ցանքը ջրելու համար կռւում են երկու ազգականներ, կռիւը վերջանում է նրանով, որ նրանց շուտով հեռացնում են միմեանցից։ Բայց յետոյ կռւողների մէկի եղբօր որդին վերցնում է հրացան և գնում միւս հակառակորդի հօրը սպանում է նրանց այգում։ Սպանվողը—Սահակ Յովսէփեան, յայտնի էր խաղաղ բնաւորութեամբ և լաւ հեղինակութիւն ունէր տեղային ազգաբնակութեան մէջ։ Սպանողը այժմ չը կայ, փախել է»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Նոր-Ջուղա, յուլիսի 16-ին

Գէորգ Քանանեան դպրոցի շէնքը բաւական բարձրացել է, այնպէս որ, հաւանականաբար 1904/05 ուսումնական տարվայ համար արդէն պատրաստ կը լինի։ Դպրոցի հանգուցեալ հիմնադրի ցանկութիւնը մօտ ապագայում իրականութեան հիմքերի վրա պիտի դրվի. սակայն պիտի ասել, որ այդ հիմքերը սկզբնական շրջանում բաւական խախուտ են։

Ընդհանրապէս եթէ ուշադրութիւն դարձնելու լինենք՝ կը տեսնենք, որ այստեղ դպրոցական գործը բաւական անաջող քայլերով է

ճանապարհը, Ազուգիւմ գիւղի մօտ անցնում կապուտակ Կարսչայը, որ բաւական յորդ մի գետ է։ Շիրակի դաշտավայրը դէպի բարձր է գնում, ճանապարհը փոքրիկ թումբերի միջով հասցնում է Ուչ-Թափա անունով երեք հսկայական բլուրներին, որոնք շարքով նստած են դաշտի երեսին և այնքան անսովոր են իբրև բարձրութիւն, որ կարծում էք թէ արհեստական են, կարծես ինչ-որ տիտաններ են թիերով կուտել այդ բարձրութիւնները։

Ուչ-Թափան յայտնի է վերջին ռուս-թիւրքական պատերազմի դէպքերից։ Ռուսաց զօրքը, նահանջելով յաղթական Մուխտար-փաշայի առջև, եկաւ հասաւ այս կողմերը և Ուչ-Թափան նրա ձախ թևը պաշտպանող բարձրութիւնն էր։ Դէպի արևմուտք, նոյնպէս դաշտի վրա, բարձրանում է Կըզըլ-Թափան, որի վրա և որի համար ռուսները այնքան արիւն թափեցին, բայց չը կարողացան խլել Մուխտարի ձեռքից։ Ուչ-Թափայից արդէն երևում է Անին մի հարթավայրի վրա, որ տարածված է Ալաջա-Դաշտի ստորոտում։ Ինչպէս յայտնի է, Անին էլ պատերազմական դաշտի գծումն էր և մի քանի անգամ գրաւվեց ռուսաց զօրքի ձեռքով,

Մինչև Ուչ-Թափային հասնելը՝ ուղևորը կանգ է առնում Մաւրակ անունով փոքրիկ և գեղեցիկ գետակի մօտ, որի ձախ ափին, մի ժայռոտ թումբի վրա շինված է Մաւրակ հայ գիւղը։ Մեր հնութիւնները այնքան լաւ ճանաչող հ. Ալիշանն ասում է, որ դա հին Մաւրիկապօլիս քաղաքն է, որ VI դարում շինվեց ի պատիւ բիւզանդական Մօրիկ հայազգի կայսրի։ Մինչև Շիրակաւանի բարձրանալը և արքունիք դառնալը՝ սա էր Շիրակի գլխաւոր կենտրոնը, մայրաքաղաքը։ Այժմ, բացի մի փոքրիկ եկեղեցուց, ոչ մի հետք չը կայ, որ ցոյց տար նախկին փառքը։ Փոքրիկ մի գիւղ է։ Գիւղացիները յիշում են միայն 1877-ի պատերազմը և նրանցից մէկը ինձ ցոյց էր տալիս, թէ այս դաշտերի որ կողմերում էին ընդհարվում ռուս և թիւրք զօրքերը և թէ Մաւրակը քանի անգամ աւարառութեան ենթարկվեց։

Մեր տեսած գիւղերի թւում ես անուանեցի և Ղօշավանքը։ Այս փոքրիկ, ողորմելի գիւղը Ախուրեանի վրա է, մի շատ գեղանկար ձորի մէջ և շրջապատված է հին [illegible], սքանչելի յիշատակարաններով։ Այստեղ ես չեմ նկարագրի Ղօշավանքը կամ Հոռոմոսի վանքը։ Նա Անիի հետ է կապված, Անիի մի անբաժան մասն է կազմում և նրա չափ փառաւոր ու գեղեցիկ է.

Վերադարձին մեր տեսած գիւղերից յիշատակութեան արժանին Արգինան է, որ գտնվում է Ալէքսանդրօպօլից Կարս տանող խճուղու վրա, Կարս-չայի ափին։ Ներկայումս հայ ազգաբնակութիւն այդ գիւղում համարեա չը կայ. ռուս և թիւրք գիւղացիներ են ապրում այդտեղ։ Բայց գիւղի արևելեան մասում, փոքրիկ տների մէջ, բարձրանում է աւերակի մի հսկայ կտոր, որ վկայում է, թէ Արգինան մի կարևոր տեղ է եղել Բագրատունեաց իշխանութեան ժամանակ։ Մօտ մի դար այստեղ էր հայոց կաթողիկոսարանը։ Աթոռը այստեղից տեղափոխվեց Անի, երբ նա թագաւորութեան մայրաքաղաք էլ դարձաւ։ Հայոց կաթողիկոսները այդ ժամանակներում նիւթական մեծ միջոցներ ունէին իրանց ձեռքի տակ. հարստութեան և փարթամութեան օրինակ կարող է համարվել Պետրոս Գետադարձը, որ, ինչպէս վկայում է պատմիչը, չը նայած իր արքայավայել կեցութեան, ընչասէր էր։ Երևի այդ մոլութիւնն էր պատճառ, որ Պետրոսը այնքան տխուր դեր կատարեց Բագրատունեաց թագաւորութեան ջնջման և Անին յոյներին տալու ստոր գործի մէջ։

Աչքի առջև ունենալով կաթողիկոսական աթոռի հարստութիւնը, զարմանալի չը պիտի թուին այն մեծ գովասանքները, որով Ասողիկը նկարագրում է Խաչիկ կաթողիկոսի՝ *) Արգինայում շինել տուած եկեղեցին, որի մի պատն է այժմեան աւերակի կտորը։ Շինութիւնը, իսկ որ, փառաւոր է եղել։ Այսպէս է վկայում այժմեան աւեր պատը։ Բայց կայ աւելի մեծ պատմական վկայութիւն։ Արգինայի եկեղեցին էլ շինել է Տրդատը, այն մեծ ճարտարապետը, որի ձեռքի գործն է Անիի մայր եկեղեցին։—Ուրեմն որքան սքանչելի մի շինութիւն է ոչնչացրել ժամանակը Կարս-չայի այս ձախ ափի վրա, որտեղից մի գեղեցիկ տեսարան է բացվում դէպի գետի հովիտը և աջ ափի բարձր բլուրները։

Շիրակը լիքն է այսպիսի հակադրութիւններով, այսպիսի տեսարաններով։ Հնութիւնները այնքան շատ են, որ դուք շուտով սովորում էք նրանց և սկսում էք հետաքրքրվել միայն ամենահռչակաւորներով...

Լէօ

---

*) Էջմիածնում, Խաչիկ վարդապետ Դադեանի մօտ ես տեսայ Խաչիկ կաթողիկոսի մի մեծ կոնդակը, որ գրված է մի շատ երկար ու մեծ թղթի վրա, կարմիր ու սև թանաքներով։

առաջ գնում. տղայոց Կենտրոնական դպրոցը մօտ 20—28 տարի է, որ համարվում է իբրև բարեկարգ դպրոց, սակայն ամենաքիչ չափով անգամ կարծէք չէ ծառայել իր նպատակին. դպրոցաւարտներից դեռ ևս չը կան մարդիկ, որ աչքի ընկնէին իբրև հասարակութեան սրտացաւ անդամներ. բոլորն էլ գործնականով տարված՝ շտապում են դէպի Արևելք՝ Հնդկաստանի զանազան քաղաքներում հարստութիւն դիզելու ցանկութեամբ։ Աշակերտների այդ տեսակ հայեացքներն ու աշխարհահայեցողութիւնները ես բացատրում եմ դպրոցում ստացած կրթութեան ուղղութեամբ։ Մանկավարժական հայեացքը կրթութեան նկատմամբ գոյութիւն չէ ունեցել այստեղ. այստեղ մարդիկ առաջնորդվել են այն հայեացքով, որ կրթութեան նպատակը պիտի լինի անհատի համար ապագայում աւելի փափուկ պաշտօններ ձեռք բերել, հարստանալ և ստամոքսի համար ապրել։ Ահա դպրոցի ոգին։

Իսկ ինչ վերաբերում է ծրագրին, պէտք է ասել, որ համարեա թէ հաւասար է մեր Թեմական դպրոցների ծրագրին, ուրեմն դպրոցներում դասախօսվում են բաւականաչափ առարկաներ. սակայն չը կայ զգալի առաջադիմութիւն. որոշ առարկաներից (եթէ չասեմ բոլորից) աշակերտ աշակերտուհիները միշտ կաղում են. ամենաընդունակներն անգամ տեսնում էք յանկարծ որոշ առարկաներից նոյն իսկ բաւարար պատասխանել չեն կարողանում։ Այս հանգամանքն ունի իր ծանրակշիռ և ուշադրութեան արժանի պատճառը, մի պատճառ, որից կախված է և դպրոցների կրիայի քայլերով առաջադիմելու խնդիրը։ Այստեղ դպրոցները չունեն կանոնաւոր, կազմակերպված ուսուցչական խումբ։ Դպրոցական գործի յաջողութեան մեծ մասը կախված է ուսուցչական խմբի մի և նոյն դպրոցում երկար ժամանակ պաշտօնավարելուց. բոլոր կանոնաւոր դպրոցներում դուք կը տեսնէք, որ ուսուցիչները մնում են ընդհանրապէս ամենաքիչը 3—4 տարի (բացառութիւններն ի նկատի չունենք)։ Սակայն այստեղ այդպէս չէ. ուսուցչական խումբը անկայուն է, ամեն տարի նոր ուսուցիչներ են գալիս (գլխաւորապէս այս վերջին տարիները), իւրաքանչիւր ուսումնական տարվայ վերջը ուսուցիչներ են հեռանում։ Սա մի այնպիսի ծանրակշիռ հանգամանք է, որի վրա արժէ լուրջ ուշադրութիւն դարձնել։ Գալիս է նոր ուսուցիչը. նա հազիւ կարողանում է ծանօթանալ աշակերտ-աշակերտուհիներին, հազիւ մի երկու քայլ էլ առաջ է գնում իր [illegible] և ահա մօտենում է տարվայ վերջը, երբ նա թողնում և հեռանում է. նմանօրինակ դէպքեր երբեմն պատահում են մինչև անգամ ուսումնական տարվայ մէջ։

Դպրոցների այսպիսի աննախանձելի դրութեան պատճառը ես գտնում եմ նախ հոգաբարձութեան անփութութեան մէջ. հրաւիրում են նոր ուսուցիչ բոլորովին անորոշ, կիսատ-պատատ պայմաններով։ Այն խնդիրները, որ ապագայում դժգոհութիւնների պատճառ են լինում, հոգաբարձութիւնն այդ ի նկատի պիտի ունենայ, մշակէ և այդ ձևով մշակած պայմանները առաջարկէ նորեկ ուսուցիչներին. ապա ամեն ինչ որոշ դնելուց յետոյ՝ պայմանաւորվի ոչ թէ մի տարով, այլ 2, 3—4, որը նպաստաւոր է թէ ուսուցչի և թէ գլխաւորապէս դպրոցի առաջադիմութեան համար։ Երկրորդ պատճառը, որ աւելի կարևոր է, այն է, որ պիտի դպրոցում ունենալ աւելի ձեռնհաս, պաշարով ուսուցիչներ. սա արդէն բաւական դժուար խնդիր է։ Երկսեռ դպրոցների բիւջէն այնչափ պարարտ չէ, որ հոգաբարձութիւնը հնարաւորութիւն ունենայ այդ տեսակի ձեռնհաս ուսուցիչ—ուսուցչուհիներ հրաւիրելու։ Կովկասից կամ այլ հեռաւոր տեղերից եկողները տարեկան 500—600 րուբլուց աւելի պակաս ռոճիկով չեն կարող գալ, և այդ շատ հասկանալի է. իսկ տեղացիների խնդիրը բոլորովին այլ է, նրանք աւելի քչով կը բաւականանան, որովհետև վերջիններիս կեանքի տնտեսական պայմաններն աւելի նախանձելի և բարւոք վիճակի մէջ են, քան եկուորներինը։ Այսպէս ուրեմն—բիւջէի տեսակէտից տեղացիներին ուսուցիչ պահելը աւելի նպատակայարմար է. բայց նպատակայարմար է, ի հարկէ, միայն այն դէպքում, երբ վերջիններս բաւական ձեռնհաս են ուսուցչութեան։ Եթէ տեղացի աշակերտ-աշակերտուհիներից հնարաւորութիւն լինէր ուղարկել բարձրագոյն կրթութիւն ստանալու կամ թէ չէ ուղղակի մանկավարժական որոշ սեմինարների ծանօթանալու՝ այդ կը լինէր ամենամեծ երջանկութիւնը դպրոցների ապագայ առաջադիմութեան համար։

Այս վերջերս լսում ենք, որ յարգելի տիկին Բաստամեանը յօժարութեամբ ընդունել է դպրոցներիս վերատեսչից իրան ուղղած նմանօրինակ մի առաջարկ. նա խոստացել է եկող տարվանից այստեղի օրիորդական Կատարինեան դպրոցի աշակերտուհիներից մէկին իր մօտ պահել Մոսկվայում և հնարաւորութիւն տալ նրան ուսումը շարունակելու, ապագայում այստեղ դարձնելու ցանկութեամբ։ Յարգելի տիկինը եթէ մի քանիսին այդ հնարաւորութիւնը տար՝ այն ժամանակ իր հանգուցեալ ամուսնու նպատակն իսկապէս իրագործված կը տեսնէր. բաւական չեն դպրոցի շէնքը և մանուկներ, այլ և պատրաստված ուսուցիչներ և վարժուհիներ։ Ցանկալի կը լինէր, որ սրտացաւ տիկնոջ օրինակին հետևէին և ուրիշները։ Յուսանք, որ միայն տիկին և հանգուցեալ պ. Բաստամեանները չը պիտի լինեն այստեղի առաջին և վերջին բարերարները...

Ա. Մեղ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բերլինից «Русск. Вѣд.» լրագրին հեռագրում են. «Ռուսաց հիւպատոս Ռոստովսկու սպանութիւնը այստեղ մեծ տպաւորութիւն գործեց։ Անկախ լրագիրներն ընդգծում են, որ ռուսաց հիւպատոսը Արևելքում առաջին տեղն է բռնում ուրիշների մէջն, և այդ պատճառով Ռուսաստանը, որպէս մեծ պետութիւն, կը պահանջէ ամենախիստ միջոցներ»։

—Մինիստրական ճգնաժամը Ունգարիայում, երևի, շուտով չի լուծվի, որովհետև լուրջ բանակցութիւններ քաղաքական գործիչների դեռ ևս չեն սկսվել, իսկ դրա համար բաւական ժամանակ կը պահանջվի։ Ռումինական Թագաւորի հեռանալուց յետոյ կայսրը կը տեղափոխվի Վիէննա և, եթէ հարկաւորվի, Բուդապեշտ։ Մինիստր-նախագահի պաշտօնի համար թեկնածուներ են համարվում՝ Սէլլ, Վեկէրլէ, կոմս Ապպօնի, Լուկաչ, կոմս Տիսսա, կոմս Հակի, կոմս Իւլի Սապարի, կոմս Իւլի Անդրաշի և ուրիշները։ Զանազան ուղղութեան լրագիրներ մէկ բանի մէջ համաձայն են, որ Սէլլիի մինիստրութեան կազմակերպութիւնը ճգնաժամի ամենալաւ լուծումը կը լինէր, բայց կասկածում են, որ նա վերադառնայ իշխանութեան այժմեան հանգամանքներում։ Յամենայն դէպս Կէրբէրի գնալը Սէլլիի մօտ կարող է, չը նայելով մի քանի լրագիրների հերքումներին, նշան համարվել, որ Վիէննայում կուզենային դիմել Սէլլիին։ Արդէն դրանից վաղ մինիստր-նախագահ եղած Վեկերլէ մեծ համակրութիւն չէ վայելում պալատում և բացի դրանից նրան արդէն այժմ օպպոզիցիա է պատրաստում կղերական ժողովրդական կուսակցութեան կողմից։ Վիէննայում համակրութիւն չէ վայելում նոյնպէս և սէյմի այժմեան նախագահ կոմս Ապպօնի, որը իր ազդեցութեամբ պարլամէնտում և այն յարգանքի շնորհիւ, որով նրան վերաբերվում են զանազան կուսակցութիւնները, իսկապէս ամենայարմար մարդը կը լինէր, որ կարող կը լինէր Ունգարիայի պարլամենտական կեանքը բնական պայմաններին վերադարձնել։ Ընդհակառակն, պալատի սիրելին, ֆինանսների մինիստր Լուկաչ ամենևին ժողովրդականութիւն չունի սէյմում, և այդ պատճառով նրան շատ դժուար կը լինէր յարմարվել այժմեան դրութեանը։ Տիսսան արդէն աշխատում էր մինիստրութիւն կազմել Սէլլի հրաժարականից յետոյ, բայց նրա նախագծած կուռ կարական միջոցները օպպոզիցիայի դէմ յետ մղեցին նրանից ազատամիտ կուսակցութեան մեծամասնութիւնը. կասկածելի է, որ նա աւելի մեծ աջողութիւն ունենայ։ Մնացած թեկնածուները պատկանում են չէզոքների թւին։

—«Frankfurter Zeitung» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը կրկին անգամ առաջ բերելով այն փաստը, որ Թիւրքիան մինչև այժմ չիրագործեց ամենագլխաւոր կէտերը նախագծված ռէֆօրմներից, բացատրում է բացի դրանից այն անկարգութիւնների պատճառը, որ թիւրքաց զինւորները կատարում են Մակեդոնիայում։ Մօնաստիրի, Սալօնիկի և Ուսկիւբի վիլայէթներում,—ասում է թղթակիցը,—թիւրքաց զօրքերը պահելու համար թիւրքաց պետական գանձարանը պէտք է ծախսէ օրական 10,000 ոսկի (մօտ 90,000 րուբլի)։ Այդպիսի գումար թիւրքաց գանձարանում չը կայ, և այդ պատճառով թիւրքաց զօրքերին թոյլատրվում է ապրել ազգաբնակութեան հաշւով։ Շատ հասկանալի է, որ դրանից տուժում է ոչ մահմեդական, այլ քրիստոնեայ ազգաբնակութիւնը։ Քրիստոնեաների յուսահատութիւնը աճում էր և աճում է օրէցօր, որովհետև թիւրքաց զինւորները իրանց պահանջները տարածում են ոչ միայն ուտեստի պաշարների, այլ և քրիստոնեայ կանանց և աղջիկների վրա, որոնց վրա զզուելի բռնաբարութիւններ են կատարում։ Շահագրգռված պետութիւնները առաջադրութիւններ արին սուլթանին, պահանջելով, որ թիւրքաց զօրքերը կենտրոնացնվին գլխաւոր կէտերում և պահվին թիւրքական գանձարանի հաշւով։ Սակայն պետութիւնների այդպիսի պահանջներին Բ. Դուռը չէ կարող գոհացում տալ գանձարանում դրամ չը լինելու պատճառով։

—Բիտօլեան վիլայէթի Օչարէնա գիւղի ուսուցչուհի Ատասովա կազմակերպում է կանանց ապստամբական զօրաբաժին «թիւրքական լծից ազատվելու և մակեդոնական անկախ թագաւորութիւն ստեղծելու համար»։ Մակեդոնական Ժաննա դ'Արկի զօրաբաժինը, ինչպէս հաղորդում են բուլղարական լրագիրները, դեռ ևս մեծ չէ, բայց խոստանում են նրա հետ միանալ Մակեդոնիայի շատ կանայք։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 օգոստոսի

Կ. ՊՕԼԻՍ։ Սուլթանը բարձրացրեց հիւպատոս Ռոստկովսկու այրի կնոջը վարձատրելու գումարը մինչև 400,000 ֆրանկի, սակայն տիկին Ռոստկովսկայան վերջնականապէս մերժեց առաջարկութիւնը։

ՎԻԵՆՆԱ։ «Fremdenblatt»-ը հաւատացնում է, որ վերջին կոնկլավում Աւստրօ-Ունգարիան օգտվեց veto դնելու իրաւունքից։ Նա յոյս ունէր աջողեցնել խաղաղասէր և հաշտարար մտաքերի տէր պապի ընտրութիւնը։ Յանձին Պիոս X-ի պապական գահը բարձրացաւ մի մարդ, որի չափաւոր և հաստատուն բնաւորութիւնը յոյս է տալիս, թէ չեն առաջանայ այնպիսի թիւրիմացութիւններ, որոնք արգելէին եկեղեցու բարձր միասիայի իրագործումը։ Այդ դէպքում աւստրօ-ունգարական կաբինէտը զրկված չէր մի որ և է կառավարութեան կողմից։

ԲԵԼԳՐԱԴ։ Կազմակերպված է նոր կաբինետ։ Նորից նշանակված են՝ ֆինանսների մինիստր—Բօրիսլավլեվիչ, դաւանանքների—Բուժչիչ և արդարադատութեան—Իովանովիչ։

Կ. ՊՕԼԻՍ։ Ջիվատում, Վանքի մօտ, մի քանի օր առաջ տեղի ունեցաւ կատաղի կռիւ թիւրքական զօրքերի և հրոսակախմբի միջև։ Վերջինս ցրվեց, բայց երբ թիւրքական զօրքերը թողին կռւի դաշտը, այն ժամանակ ուրիշ հրոսակախմբեր նորից բռնեցին Ջիվատի անցքը։

Հերջիի շրջակայքում, Կրուշեվի մօտ, կռիւը դեռ վերջացած չէ։

3 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված է Բիտօլիայի ռուսաց հիւպատոսութեան կառավարչի հետևեալ հեռագիրը, օգոստոսի 1-ից. «Զինւորական դատարանը Էդհէմ-բէյի նախագահութեամբ, այսօր չորսօրեայ քննութիւնից յետոյ վճիռ կայացրեց Բիտօլիայի կայսերական հիւպատոսի սպանութեան գործի առիթով։ Ամբողջ գործի քննութեան ընթացքում ես օգտվում էի դատախազի իրաւունքներով և արտօնութիւններով։ Այստեղ տարածված էր յանդուգն զրպարտութիւն, թէ հիւպատոսը իբր թէ ծեծել, անպատւել է պահապան զինւորին և նոյն իսկ գնդակ էր արձակել նրա վրա։ Այդ պատճառով ես պնդեցի, որպէս զի դատարանը վճիռ կայացնելուց առաջ պարզէ գործի այդ հանգամանքները։ Իմ դրած հարցերի հիման վրա պարզվեց հետևեալը. պահապանը պատիւ ցոյց չէ տուել հիւպատոսին, որը նրան նախ նշան է արել և ապա կառքից դուրս գալով հարցրել է նրա անունը։ Կատարելապէս ապացուցված է, որ Ռոստկովսկին գնդակ չէ արձակել պահապան կանգնած Խալիմի վրա և նրան ոչ մի վիրաւորանք չէ հասցրել։ Չը նայելով դրան, պահապանը մի քանի անգամ հրացան է արձակել նրա վրա։ Երբ հիւպատոսը ընկել է, նա մօտեցել է, մի անգամ էլ հրացան է արձակել ուղղակի գլխի վրա և հարուածել է քունքին հրացանի կոթով։ Խալիմը դատապարտվում է իբրև Ռոստկովսկու սպանող. իսկ միւս պահապան—Աբասը՝ կատարված դէպքի վկան, մեղադրվում է այն բանում, թէ պաշտպանութիւն ցոյց չէ տուել հիւպատոսին։ Մնացած երկու պահապանները՝ Զէյնալը և Ասիմը բացակայ էին, բայց առաջինը, որ աշխատել էր անմեղ դուրս բերել ընկերներին, մեղադրված է իբրև սուտ վկայ։ Ժանդարմական իշխանութիւնը մեղադրվում է այն բանում, թէ մի այդպիսի նշանաւոր տեղում պահապան է կանգնեցրել վայրենի ալբանացիներին, որոնք նոյն իսկ թիւրքերէն չեն հասկանում։ Ենթասպայ Սամայիլ Հակկին և Սալիհ Կադրին յանցաւոր են ճանաչված, որովհետև հիւպատոսի հետ կառքում նստած ուսուցիչ Մեսերկովին դէպի ռուսաց հիւպատոսարան տանելիս հայհոյանքներով պղծել են հանգուցեալի յիշատակը։ Լապտերապան Թեվֆիկը, որը դատարանում հերքում էր միւս վկաների ցուցմունքը և պնդում էր, թէ հիւպատոսը ծեծել էր պահապանին և գնդակահարել էր, մեղադրվում է իբրև սուտ վկայ։ Զինւորական դատարանը վճռեց ենթարկել՝ Խալիմին և Աբասին մահվան պատժի, Զէյնալին և Թեվֆիկին—տաժանակիր աշխատանքների առաջինին՝ 15 տարով. Իսմայիլ և Սալեհ օֆիցէրներին—զրկել զինւորական ծառայութիւնից, իսկ Ասիմին արդարացրեց։ Դատավճիռը իմ ստորագրելուց յետոյ յայտնվեց դատապարտվածներին—հէնց իմ ներկայութեամբ։ Հիլմի փաշան յայտնեց, որ նա Կ. Պօլսից հրաման ունի դատավճիռը իսկոյն իրականացնելու մասին։ Յանցաւորներին կախաղան բարձրացրին այսօր, պատշաճաւոր պարագաներում, ճաշից յետոյ ժամը $4^{1}/_{2}$-ին։ Օֆիցէրներին պաշտօնազուրկ անելու հանդէսը կատարվելու է այսօր, երեկոյեան։ Վիլայէթի ժանդարմերիայի գլխաւորը, Բիտօլիայի ժանդարմական բատալիօնի հրամանատարը և այն վաշտի կապիտանը, որտեղ ծառայում էր Խալիմը, պաշտօնից արձակված են և դատի յանձնած։ Սկսված է մի առանձին քննութիւն, որպէս զի բաց անեն, թէ զինւորական հացթուխարանից ովքեր էին հրացան արձակել հիւպատոսի կառքի վրա»։

«Прав. Вѣстникъ»-ում տպագրված է, որ նորից թոյլատրված է «С.-Петерб. Вѣдомости» լրագրի հատով վաճառումը։

Չորս ամսով դադարեցրած է «Уралъ» լրագիրը։

ՍՕՖԻԱ։ Իշխանը չի վերադառնայ Ունգարիայից, որովհետև նրան հանգստացնող տեղեկութիւններ են ուղարկել։ Մինիստրները վերադարձան արտասահմանեան ճանապարհորդութիւնից։ Ջումայի մօտ յայտնվեցին երեք նոր, լաւ զինված հրոսակախմբեր։ Ապստամբութիւնը մօտենում է սահմանին կից շրջանին, որ և խռովարար բնաւորութիւն ունեցող մի հանգամանք է։ Մակեդոնիայում, Ուսկիւբի սանջակում թիւրքերն այրեցին 14 քրիստոնէական գիւղեր։ Սալօնիկի հետ հաղորդակցութիւնը կտրված է Գէվգէլէի կամուրջի աւերման պատճառով։ Մօնաստիրի մօտ ապստամբները խլեցին թիւրքական պօստը 1,000 թիւրքական լիրայի հետ միասին։

4 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օգոստոսի 3-ին Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին բարեհաճեցին մեկնել դէպի Պսկով՝ զօրախաղին ներկայ լինելու համար։ Նորին Կայսերական Մեծութիւնների հետ մեկնեց Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնան։ Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլօվնան բարեհաճեց ուղևորվել Պսկով։ Մեծ Իշխան Նիկօլայ Նիկօլայևիչը մեկնեց դէպի Բրեստ Լիտովսկ։

ՍՕՖԻԱ։ Ապստամբութիւնը տարածվեց Կրատօվօ, Ջումայօ, Բանսօ, Նէվրօկոպ և Ռազլօգ կազաներում։ Ապստամբները նոր ույժեր են ստացել և կռւում են բոլոր գծերի վրա։ Ադրիանօպօլի վիլայէթում էլ ապստամբութիւնը ուժեղ է։ Ազգաբնակութիւնն ամեն տեղ մասնակցում է ապստամբութեանը։ Դեդէաղաչ—Սալօնիկի գծի վրա օդը թռցրին և աւերեցին թիւրքական զինւորներով լի գնացքը։ Մակեդոնական շրջանները դէպքերի վրա ուշադրութիւն են հրաւիրում այն պետութիւնների կողմից, որոնք սպառողական քաղաքականութեան են հետևում։ «Софійскія Вѣдомости» յանդիմանութիւն է արտայայտում իշխանին, որ ամենաօրհասական րոպէին հեռացել է երկրից։

ՍԱԽԱԼԻՆ։ Լօնդօնից եկաւ 5 անգլիացիներից բաղկացած մի մասնաժողով, որը քննելու է կղզու արևելեան ափին գտնված նաւթաբեր հողերը, որ տրված էին ինժեներ Կլէյնիւսին հետազօտութեան։ Եկած անգլիացիների թւում կայ մի երկրաբան և մի ինժեներ։

ԱԼԻԿԱՆԴԷ։ Նկատվեց երկրաշարժ. մարդիկ չը վնասվեցին։

ՍՕՖԻԱ։ Գեներալ Ցօնչևը անհետացել է Բօլգարիայից։ Բօլգարական կառավարութիւնը պետութիւններին յանձնեց մի յայտագիր, որով մանրամասնօրէն նկարագրում է փաստերը և մատնանիշ է անում մակեդոնական այժմեան ապստամբութեան իսկական պատճառները։

ՆԵԱՊՕԼ։ Վեզուվիյի գործունէութիւնը շարունակվում է։ Լաւան թափվում է մեծ տարածութեան վրա, ուղղվելով դէպի Պօմպէյ։

Կ. ՊՕԼԻՍ։ Ուսկիւբ—Սալօնիկի զինւորական գնացքը վնասված է ռելսների վրա պայթեցրած է դինամիտային ռումբերով։ Մի զինւոր սպանված է, շատերը վիրաւորված։ Քէպրիւլիւյի մօտ, երկաթուղային կամուրջի վրա գտնված են ռելսներին կապած 2 տուփ դինամիտ։

Կ. ՊՕԼԻՍ։ Նոր փաստեր կան, որոնք ցոյց են տալիս, թէ հիւպատոսի սպանութեան հիմքը դաւադրութիւնն է եղել։ Պատիւ ցոյց տալուց հրաժարվելը, ըստ երեւոյթին, նպատակով էր։ Բացի դրանից, ինչպէս ենթադրում են, Բուկովից մինչև Մօնաստիր պատրաստված են եղել դեռ էլի երկու դարաններ։

Կ. ՊՈԼԻՍ։ Մինչև այժմ դեռ չեն հաստատված Կրուշեվը գրաւելու մասին եղած տեղեկութիւնները։ Պրիզրէնի շրջակայքում արիւնահեղ ընդհարումներ տեղի ունեցան հրոսակախմբերի հետ, որոնց ժամանակ վերջիններս կորցրին մօտ 100 մարդ։ Ֆլօրէնի կազայում հրոսակախմբերը այրեցին չորս ջրաղացներ և շատ տեղերում՝ հաւաքած հացը։

Կ. ՊՈԼԻՍ։ Յուլիսի 29-ին, Սալօնիկի վիլայէթի Գումենջայի մօտ ապստամբները գցել են դինամիտային շատ ռումբեր։ Ճիշտ չեն այն տեղեկութիւնները, թէ Ադրիանօպօլսի վիլայէթում հրոսակախմբերի աւելի ուժեղ շարժում է առաջացել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԽՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշւով, փակագծում Թիֆլիսի հաշւով)

Արագ գնացք Թիֆլիսից—Բաթում ամեն օր դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.) հասնում է Բաթում երեկոյեան 8 ժ. 3 ր. (9 ժ.)։

Արագ գնացք Բաթումից—Թիֆլիս ամեն օր դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 24 ր. (11 ժ. 22 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 8 ժ. 44 ր. (9 ժ. 42 ր.)։

Պօստատար գնացք Բագուից դուրս է գալիս երեկոյեան 9 ժ. 18 ր. (10 ժ. 16 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 4 ժ. 25 ր. (5 ժ. 23 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 5 ժ. 20 ր. (6 ժ. 18 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժամ 3 րոպէին)։

Մարդատար գնացքը Բագուից դուրս է գալիս ցերեկվայ 1 ժ. 3 ր. (2 ժ. 1 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժ. 3 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 6 ժ. 51 ր. (7 ժ. 49 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 6 ժ. 58 ր. (7 ժ. 56 ր.)։

Պօստատար գնացքը Բաթումից դուրս է գալիս գիշերվայ 9 ժ. 23 ր. (10 ժ. 21 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 10 ժ. 51 ր. (11 ժ. 49 ր.), հասնում է Բագու առաւօտեան 5 ժ. 8 ր. (6 ժ. 6 ր.)։

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 10 ժ. 3 ր. (11 ժ. 1 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 10 ժ. 34 ր. (11 ժ 32 ր.), հասնում է Բագու ցերեկվայ 3 ժ. 2 ր. (4 ժ.)։

Պօստատար գնացքը դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Երեւան երեկոյեան 11 ժ. 32 ր. (12 ժ. 30 ր.), հասնում է Երեւան 5 ժ. 14 ր. (6 ժ. 12 ր.), հասնում է Կարս 2 ժ. (2 ժ. 58 ր.)։

Պօստատար գնացքը Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 3 ժ. 57 ր. (4 ժ. 55 ր.), հասնում է Ալէքսանդրօպօլ երեկոյեան 7 ժ. (7 ժ. 58 ր.), Երեւանից դուրս է գալիս 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 5 ժ. 11 ր. (6 ժ. 9 րոպէին)։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

ՉԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։

Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.

Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Գ. Ա. ԹԱՐԻԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. Ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆՑ—1—1½ ժ. Ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. ՌՕՍՏՕՄԲԵԿՕՎ—5—6 ժ. վիրաբուժ. մորթու և վեներական հ.

Լ. Վ. ԲԱՐՑՕԼԴ—7—6 ժ. նեարդային (էլեկտրաբույժ) ներքին և վեներական հ.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԵՐՓԻՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

Գ. Ա. ԹԱՐԻԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—8—8½ ժ.

Վճարը 50 կ. Չքաւորները ձրի։ Համախորհրդի (Կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ց. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—ատամն. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ **ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ**

Ներսիսեան դպրոցի ուսուցիչ Գ. Շահբուդաղեան ընդունում է **ԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ** չափաւոր վարձատրութեամբ և պատրաստում է ըստ ցանկութեան նոյն դպրոցի համար։ Հասցէն՝ у Абасъ-Абатской площади, 3 Могнинскій тупикъ, домъ № 23. 2—2

ԳՈՒՏՏԵՆԲԷՐԳ

գրախանութում վաճառվում են

Տաղք և թատերգութիւնք, Գ. Դուրեանի	1—50
Պօլ և Վիրգինէ, վիպասանութիւն, գաղ. թարգմ. Մանուկ բէյ . . .	1—20
Աղջիկը (առողջապ. և բարոյագիտակ. էտիւդ) (պատկերն.), բժկ. Վ. Արծրունու	—60
Եղիշէի պատմութիւն վարդանանց, ըստ անձեռագրոց օրինակի, Խ. Յովհաննեանցի	1—50
Երեք մահ և արդարն ու մեղաւորը, Լ. Ն. Տօլստոյի . . .	— 15
Կեղծաւոր դար, Մանտեգացցա թարգմ. Մ. վարդապետ	— 25
Տաղտկալի պատմուածք—ծերունու օրագրից, Չեխովի . . .	— 30
Ոսկի աքաղաղ, Ա. և Բ. մաս, Րաֆֆի, բ. տպագր.	1 —
Նկարներ (Ծաղկաքաղ իմ նամակներից) Ն. Ցարոյի	— 50
Մի խոստովանութիւն, Պօլ Բուրժէ, թարգմ. Ն. Ցարոյի . . .	— 15
Ժողովրդական առակներ, հատ. Ա. Մօլլա Նասրէդդին, հաւաքեց Ե. Լալայեան .	— 25
Ժող. առակ., հ. Բ., Հորոս, » .	— 5
Մարդը և իւր տեղը, պրօֆէսոր Ալբրէխտի, բ. տպ. . . .	— 50
Պատկերներ, գրեց Մուշեղ վարդապետ	— 60
Հովուական թուղթ Ներսէս եպիսկ. Տարօնի և Վասպուրական ժողովրդից .	— 15
Արթին պէյ, Նախարար արտաքին գործոց և վաճառականութեան . .	— 20
Անանիա Թարգմանիչն և իւր գրական գործոց նմոյշներ . . .	— 50
Տարվինականութիւն կամ տեսակաց և մարդու ծագմ. խնդիրը հայր Երեմեանի	40
Ցոլքեր, գրեց Զաբէլ Ասատուր .	— 50
Ամայի կղզին կամ ատելութիւն և սէր	— 50

Դիմել. Книжный магазинъ „Гуттенбергъ„, (Дворцовая). Г. Галустяну. 1—3

Թաւրիզի Բերդաթաղի դպրոցների համար հարկաւոր են

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

կամ

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ

Կրօնի, հայոց լեզուի, ռուսերէնի, ֆրանսերէնի (6 դաս), թուաբանութեան, ընդհանուր պատմութեան ու աշխարհագրութեան և այլն։ Իւրաքանչիւրը կունենայ 24 դաս՝ հերթական վերակացութեամբ։ Դասագին՝ առաջնակարգ առարկաների համար տասը թուման, իսկ երկրորդականների՝ ութ թուման։ Ճանապարհածախսերին երեսուն թուման յաւելում։

Դիմել Թաւրիզ տեսուչ Ալէքսանեանին։

1—2

Յ. Վ. Ֆարրար

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ

կամ

Պատկերներ Ներոնի ժամանակից

պատմական զրոյց

Ռուսերէնից թարգմանեց

Մխիթար վարդապետ

Գինն է 2 ր. 50 կ.

Վաճառվում է «Գուտտենբերգ» գրախանութում։

3—3

ՇՈՒՇՈՒՄ

պարապում եմ հոգևոր դպրոց մտնող և վերաքննութիւն ունեցող աշակերտների հետ։

4—6 Լևոն Յովսէփեան

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՕՐ. Ս. ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՄԱՆԳԼԻՍՈՒՄ, ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆԻ ԱՄԱՌԱՆՈՑՈՒՄ

97—105

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ

Ա. հատոր

Մակար եպիս. Բարխուդարեանցի։ Գինն է ճանապարհածախսով մի րուբլի յիսուն կոպէկ. ցանկացողք կարող են դիմել հեղինակին ս. Էջմիածին իւր հասցէին։ Ապառիկ չը յղուիր։

3—3

Ներսիսեան դպրոցաւարտ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ուսուցչի պաշտօն է որոնում։ Կարող է և Պարսկաստան գնալ։ Հասցէն՝ Магазинъ Даніеляна, Желѣзный рядъ. 3—3

SANTAL MIDY

ՊԱՐԻԶԻ ԴԵՂԱԳՈՐԾԻ

ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ

ԹՈՅԼ Է ՏՐՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Այս կապսուլների մէջ պարունակված զուտ սանտալի էսսենցիան բժիշկները խորհուրդ են տալիս գործածել մեզէի (գաղտնի հիւանդութիւնների) դէմ, կապայ-բալզամի և կուբեբայի փոխարէն։ Նա ներգործում է աւելի արագ, չէ յոգնեցնում ստամոքսը, ոչ մի հոտ չէ պատճառում և ոչնչացնում է փսխումն ու կլտիկը։

Կեղծիքներից խուսափելու համար պահանջեցէք, որ իւրաքանչիւր կապսուլի վրա սև տառերով դրոշմված լինիքը։ MIDY

Վաճառվում է Ռուսաստանի գլխաւոր դեղատներում։

(5, 10, 15, 20 և 25) 32—60

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Միքայէլեան փողոց, № 161.

Աչքի առաջ ունենալով Թիֆլիսի գործակատարներից մի քանիսի շատ անգամ կրկնված խնդիրը՝ հնարաւորութիւն տալու նրանց առևտրական գիտութիւններ ձեռք բերել՝ Դասարանների Վարչութիւնը, կամենալով բաւարարութիւն տալ նրանց ցանկութեան, բաց է անում այս օգոստոս ամսի 15-ից կօնտօրական գործի երեկոյեան կուրսեր հետևեալ ծրագրով.

1) Առևտրական հաշւապահութիւն։
2) Թուաբանութիւն հաշւէցոյցի վրայ։
3) Առևտրական հաշւարարութիւն։
4) Առևտրական թղթերի—հաշիւների, ֆակտուրների կազմութիւն և այլն։
5) Գործակատարների պարտականութիւնները հասարակութեան և խանութատիրոջ վերաբերմամբ։

Կուրսերում ընդունվում են ամեն հասակի գրագէտ գործակատարներ։

Պարապմունքները տեղի կունենան երեկոները, 8½—10 ժամը, 5 րուբլի վարձով կամ 40 րուբլի տարեկան։

Գրվել կարելի է միայն մինչև օգոստոսի 15-ը Դասարանների դիւանատանը (Միքայէլեան փող. № 161) իւրաքանչիւր օր, 8½ ժամից մինչև 10 ժամը երեկոյեան, կամ բեռների տեղափոխութեան ռուսական ընկերութեան գրասենեակում, Տէր-Յարութիւնեանի մօտ։

4—10 Հիմնադիր Ի. Բրօն-Ֆօն-Բրէններ

Ֆինանսների նախարարութեան հրաւասութեան տակ գտնվող

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշւապահութիւն 4½ ամսում։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Իտալական կրկնակի հաշւապահութիւն առևտրագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաև. նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշւապահութիւն։ 2) Առևտրական թուաբանութիւն։ 3) Առևտրական թղթակցութիւն։ 4) Մուրհակային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն եւ ուղղումն անճոռնի ձեռագրի։ 6) Թուաբանութիւն համրիչի վրա։ 7) Գրելու վարժութիւն «Րէմինկտօնի» գրելու մեքենայի վրա (կամաւոր)։

Կուրսերի համար դասատուներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով և իրանց գործին մասնագէտ մարդիկ, որոնք հաստատվել են իրանց պաշտօնում ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար էլ հրաւիրված է մի գեղագիր նկարիչ։

Ընդունելութիւն ամեն օր ժամը 5 մինչև 7 երեկ.։ Պարապմունքները սկսվում են 1903 թւի սեպտեմբերի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 րուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Н. В. Абраамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (կ. և. հ.) 8—25

Ֆինանսների մինիստրութիւնից հաստատված

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

երկու սեռի անձանց համար

[*Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова*]

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշւապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշւապահութիւն՝ առևտրական, արդիւնաբերական-գործարանական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսանումն գրող մեքենայի վրա։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամենայն օր, կուրսերում՝ առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа)—տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ Баку, Учредителю Коммерческихъ Курсовъ А. И. Теръ-Каспарову. (և. չ.) 10—25

Ղօշավանքի „ՏԱՅԼԱՐ" անուանված 600 դեսեատին վարելահողերը և արօտատեղերը կապալով տալու համար յունիսի 7-ին նշանակված աճուրդը և 9-ին կրկնաճուրդը չը կայանալու պատճառով, Կարսի հայոց հոգևոր կառավարութեան ատեանում նշանակված է ամսիս 26-ին, առաւօտեան ժամը 12-ին նոր ԱՃՈՒՐԴ և 28-ին ԿՐԿՆԱՃՈՒՐԴ՝ նոյն հողերը կապալով տալու համար։ Ցանկացողները պայմանների մասին կարող են դիմել ատեանս ամենայն օր։

3—8 Անդամ հոգևոր կառավարութեան՝ Մինաս ա. քահ. Տէր-Պետրոսեան

Дозволено Цензурою. Тифлисъ, 4 августа 1903 г. Электропечатня Груз. Изд. Т—ва, Б. Ванкская ул.